ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի ողջույնի խոսքը ՀՊՏՀ 23–րդ գիտաժողովի բացմանը

Հարգարժան հյուրեր, գործընկերներ, ուսանողներ

Ուրախ եմ ողջունել ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 23-րդ գիտաժողովում, որը կանցնի «Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրի ներքո:

Համալսարանում անցկացվող գիտաժողովներն ու գիտական նստաշրջանները կարևորվում են այնքանով, որքանով դրանք ծառայում են որպես փորձագիտական յուրօրինակ հարթակ Հայաստանի Հանրապետության հրատապ հիմնախնդիրների քննարկման համար:

Համալսարանական գիտաժողովների նպատակը մեկ տարում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համախմբված ներկայացումն է և հետազոտությունների հետագա ուղղությունների նախանշումը:

Հայաստանի տնտեսական զարգացման ներկա քաղաքականությունը կոչված է երաշխավորելու տնտեսության արագ և անցնցում փոխակերպում այնպիսի համակարգի, որին ներհատուկ են.

- տեխնոլոգիական սրընթաց զարգացումների նկատմամբ բարձր ընկալունակությունը
- մարդկային կապիտալի հետևողական զարգացումը՝ դիտարկելով այն որպես տնտեսական փոխակերպման առանցք և օբյեկտիվ

սահմանափակումներից անկախ մրցակցային առավելություններ ձևավորելու նախապայման

• ներքին և արտաքին ռեսուրսների օգտագործման ուղղությունների առավելագույն ներդաշնակեցումը զարգացման առաջնահերթություններին

Համաշխարհային տնտեսությունում Հայաստանի բարենպաստ դիրքավորման անհրաժեշտ նախապայմանը երկրի տնտեսության մրցունակության բարձրացումն է՝ իրական հատվածում նորարարությունների ներդրման հնարավորությունների մեծացման, արտադրողականության և բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի աճի, նորագույն արտադրությունների և տեխնոլոգիաների յուրացման միջոցով:

Հարգելի մասնակիցներ, մեզ սպասվում են գործարար միջավայրի և ներդրումային քաղաքականության, ֆինանսական շուկաների և հարկային քաղաքականության, ՀՀ տնտեսական զարգացման և տնտեսական անվտանգության, ինչպես նաև միջազգային տնտեսական համագործակցության խնդիրներին ու հեռանկարներին նվիրված հարցերի քննարկումներ, որոնք կարևոր են երկրի տնտեսական զարգացման քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Ուրախ եմ ողջունել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ պարոն Հարությունյանին և շնորհակալություն հայտնել գիտաժողովին մասնակցության և գիտության պետական կոմիտեի կողմից գիտաժողովի անցկացման ֆինանսական աջակցության համար:

Շնորհակալություն եմ հայտնում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին և ասպիրանտներին գիտաժողովին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար: Գիտաժողովի բոլոր մասնակիցներին ցանկանում եմ արդյունավետ ու արգասաբեր աշխատանք:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 23-րդ գիտաժողովը հայտարարում եմ բացված:

ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ. դ., պրոֆեսոր

Կորյուն Աթոյան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, Էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am